

Անցկացման օրը՝ 27 փետրվարի 2026թ.
Ժամը՝ 12.00
Վայրը՝ ք. Արարատ, մշակույթի տան դահլիճ

Հանրային քննարկմանը մասնակցում էին.

Արարատի համայնքապետարան

համայնքապետ պ-ն Ա. Ավետիսյանը, համայնքի ղեկավարի տեղակալներ՝ Կ. Քենդրջյանը, Ա.Բաղդասարյանը, աշխատակազմի քարտուղար՝ Ա.Մուսիկյանը

«ԳՊՄ Գոլդ» ՍՊԸ-ի կողմից՝

«ԳՊՄ Գոլդ» ՍՊԸ Բնապահպանության և տեխ. անվտանգության գծով կառավարիչ Անուշ Գևորգյանը, հանրային կապերի և սոցիալական քաղաքականության գծով կառավարիչ Ռ. Գրիգորյանը, Արարատի ֆաբրիկայի բնապահպանության և տեխ. Անվտանգության բաժնի աշխատակիցները:

«Ակունք Ֆիրմա» ՍՊԸ

Տնօրեն Հովհաննես Նիկողոսյանը- նախագծող

Մասնակցում էին նաև՝ Արարատի համայնքապետարանի աշխատակիցներ, ավագանու անդամներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, «ԳՊՄ Գոլդ» ՍՊԸ աշխատակիցներ, բնապահպաններ, լրագրողներ, բժիշկներ, մանկավարժներ, ակտիվիստներ և բնակիչներ: /Մասնակիցների ցուցակը կցվում է/:

Բացման խոսքով հանդես եկավ **Արարատ համայնքի ղեկավար պ-ն Ա. Ավետիսյանը**, ով ողջունեց ներկաներին, ներկայացրեց «ԳՊՄ Գոլդ» ՍՊԸ կողմից նախատեսվող գործունեությունը, տվեց տեղեկատվություն հանրային լսումների կազմակերպման մասին:

Ողջույնի խոսքով հանդես եկավ **«ԳՊՄ Գոլդ» ՍՊԸ Բնապահպանության և տեխնիկական անվտանգության գծով կառավարիչ Ա. Գևորգյանը**, շնորհակալություն հայտնեց համայնքների ներկայացուցիչներին մասնակցության համար: Ներկայացրեց նախատեսվող գործունեության անհրժեշտության պատճառները՝ ապահովել ֆաբրիկայի կայուն աշխատանք: Նշվեց, որ պոչերի վերամշակման և պոչամբարի նոր բջջի կառուցման գործընթացը նոր չէ համայնքի համար, այն կիրառվել է 1996-1998թթ-ին ֆաբրիկայի վերաբացման ժամանակ: Ներկայացրեց օրենսդրական պահանջները. Նախատեսվող գործունեությունը ենթակա է ՇՄԱ գնահատման և փորձաքննության, Ա կատեգորիայի գործունեություն է, հանրային լսումները կազմակերպվում են 2 փուլով, սա 1 փուլն է: Լսումները կազմակերպվել են համաձայն ՀՀ օրենսդրական պահանջների:

Հովհաննես Նիկողոսյանը նշեց, որ պոչամբարի նոր բջիջը կառուցվելու է գործող պոչամբարի տարածքում, ջրանցքներից հեռու, պատնեշը նախատեսվում է ստեղծել ոսկի չպարունակող պոչերից, պատնեշի ընդհանուր բարձրությունը՝ 20մ: Տարածքը նախապատրաստվելու է, գրունտային ջրերի պահպանության համար նախատեսվում է դրենաժային համակարգ: Պոչերի վրա նախատեսվում է ավազի ծերտ, ապա գեոմեմբրան: Յուրաքանչյուր շերտ հարթեցվում է, ապա խտացվում: Ոսկի պարունակող

պոչերը տեղափոխվում են խյուսապատրաստման տեղամաս, նոսրացվում մինչև 50 տոկոս, ապա մղվում հարստացուցիչ ֆաբրիկա: Ֆաբրիկայի տեխնոլոգիան չի փոփոխվում: Այս նախագիծը հնարավորություն կտա ունենալ 1.5 մլն տ/տարի պոչերի վերամշակման արտադրողականություն, մոտ 9 մլն տ պոչերի տեղադրման հնարավորություն և 5-6 տարվա աշխատանք:

Հարցեր.

Ա. *Ավերիսյան*-Ստուգվել է արդյո՞ք որպես պատվար կիրառվելիք պոչերի ամրությունը, որպեսզի խուսափենք հետագա արտահոսքերից: Եթե հիշում եք նախկինում պոչամբարները կառուցվել են 4-րդ կարգի գրունտով:

Հ. *Նիկողոսյան* -նախկինում պիոներական պոչամբարները կառուցվել են քարալիցքային եղանակով, իսկ բարձրացումը՝ տղմալցային եղանակով, այսինքն պոչերով: Պոչերը տեղադրվելու են 2.5մ բարձրության շերտերով, յուրաքանչյուր շերտ գլանակվելու է, ապա տեղադրվելու է նոր շերտը: Կայունության հաշվարկ կատարվել է, վերցվել են պոչերի նմուշներ, կատարվել է համապատասխան անալիզ:

Ա. *Գևորգյան*-նախագծումը կատարվում է «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ»-ի կողմից, բոլոր փոչձերն իրականացվել են:

Մ. *Խաչատրյան*, ՀՀ *քաղաքացի*- Արդյո՞ք գոյություն ունեցող պոչամբարը լրիվ անախտան է դարձել, դրա համար կառուցվում է նոր բջիջ:

Հ. *Նիկողոսյան* -Պոչամբարը մնում է, ոսկեզուրկ պոչերը հանվելու են և օգտագործվեն որպես պատնեշ, իսկ ոսկու պարունակությամբը՝ վերամշակվեն: Մինչև նոր բջջի կառուցվումը պոչերը լցվելու են հին պոչամբարի մի մասում, ապա նոր բջջում, ապա նորից հին պոչամբարում:

Ա. *Ավերիսյան* - Ֆաբրիկան խորհրդային տարիներին աշխատել է ոչ միայն Սոթքի հանքի , այլ նաև Ուզբեկստանից, Վրաստանից, Ղազախստանից բերված հումքով, սակայն ոչ լիարժեք կորզման հետևանքով, ոսկու որոշակի քանակություն թափոնների հետ լցվել է պոչամբար: Այսօր Սոթքի հանքը չի կարող 1.75 մլն տ/տարի արտադրողականություն ապահովել, ֆաբրիկան չի կարող լաիրժեք աշխատել, առաջանում է պարապուրդի խնդիր: Այդ պատճառով, ընկերության ղեկավարությունը կատարել է պոչերում ոսկու պարունակության ուսումնասիրություն և կայացրել միջանկյալ որոշում՝ պոչերի վերամշակում մինչև ստորգետնյա հանքի լրիվ շահագործում: Տեխնոլոգիան նոր չէ, կիրառվել է 1996-97թթ-ին: Ժամանակակից սարքավորումները թույլ են տալիս պոչերում եղած պարունակությունն ավելի լավ կորզել: Նպատակը գործարանի կայուն աշխատանքն է:

Մ. *Խաչատրյան*, ՀՀ *քաղաքացի*-Եթե որոշվի վերամշակել Արծվանիկի պոչամբարը, ապա պետք է նոր բջիջ կառուցվի, թե այլ տեխնոլոգիա կարելի է կիրառել:

Հ. *Նիկողոսյան* -Արծվանիկի պոչամբարը պետք է վերամշակվի այլ տեխնոլոգիայով, քանի որ այնտեղ ոսկի պարունակող պոչեր չեն, սակայն այսօր նման հարց չի քննարկվում:

Ա. *Գևորգյանը* և Ռ. *Գրիգորյանը* տեղեկացրեցին, որ Արծվանիկի պոչամբարը կապ չունի «ԳՊՄ Գոլդ» ՍՊ ընկերության հետ և ընկերության ներկայացուցիչներն իրավասու չեն այլ իրավաբանական անձի ակտիվների վերաբերյալ քննարկումներ վարել:

Պ-ն Ավետիսյանը նշեց, որ տեխնոլոգիական ցիկլի փոփոխություն չի լինելու: Նախորդ հանդիպումների և քննարկումների ժամանակ համայնքի կողմից վեր հանված հարցադրումները պահպանվելու են: Նշեց նաև, որ «ԳՊՄ Գոլդ» ընկերության հետ համագործակցությունը բարձր մակարդակով է ընթանում և հուսով ենք կշարունակվի: Օրենքով պահանջվում է ներկայացնել համայնքի կարծիքը: Այն կներկայացվի առաջիկա ավագանու նիստում քննարկումից հետո: Բոլոր առաջարկները կներկայացվեն ավագանու որոշման մեջ՝ համագործակցություն, մոնիտորինգ և այլ:

Պ-ն Ավետիսյանը և տ-ն Գևորգյանը շնորհակալություն հայտնեցին ներկաներին մասնակցության համար:

Արձանագրման քարտուղար
Արարատ համայնքի ղեկավարի

«ԳՊՄ Գոլդ» ՍՊԸ ներկայացուցիչ



[Handwritten signature]

/ Ա.Մուսիկյան /

/ Ա. Ավետիսյան /

/ Ա. Գևորգյան /